

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄԱՐԳԱՐԻՏ ԱՇՈՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ  
ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2020

---

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**ПЕТРОСЯН МАРГАРИТ АШОТОВНА**

**ОСОБЕННОСТИ И ОБЩИЕ ЧЕРТЫ КОНФЛИКТОВ И ПРОЦЕССОВ ИХ  
УРЕГУЛИРОВАНИЯ НА ЮЖНОМ КAVKAZE**

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы, международные отношения”

**АВТОРЕФЕРАТ**

Ереван 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բոյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

քաղաքական գիտությունների դոկտոր Ս. Թորոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

քաղաքական գիտությունների դոկտոր Ս. Քոչարյան

քաղաքական գիտությունների դոկտոր Գ. Արշակյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2020 թ. հուլիսի 28-ին, ժամը 12.00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի Քաղաքագիտություն 056 մասնագիտական խորհրդի նիստում:


Մասնագիտական խորհրդի հասցեն է՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է հունիսի 15-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

պատմական գիտությունների թեկնածու, դոց.



Վ. Ս. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Государственном университете имени В. Я. Брюсова.

Научный руководитель:

доктор политических наук

Т. Торосян

Официальные оппоненты:

доктор политических наук

Т. Кочарян

доктор политических наук

Г. Аршакян

Ведущая организация:

Ереванский государственный

университет


Защита состоится 28 июля 2020г. в 12.00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 Политические науки ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. А. Манукяна 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 15 июня.

Научный секретарь специализированного совета,

кандидат исторических наук, доцент



В. С. Петросян

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Հարավային Կովկասի հակամարտությունները և դրանց կարգավորման գործընթացները շարունակում են համարվել տարածաշրջանային անվտանգության ու խաղաղության ամրապնդման վրա ազդեցություն ունեցող առանցքային խնդիրներ: Կարգավորման գործընթացների վրա ազդող գործոնները գտնվում են չափազանց լայն միջակայքում, իսկ խնդիրների հանգուցալուծումը շարունակում է համարվել բավական բարդ գործընթաց՝ չնայած այն հանգամանքին, որ կարգավորման գործընթացում ներգրավված են մեծ փորձ և ազդեցության լծակներ ունեցող միջազգային կազմակերպություններ: ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում «արթնացած» հակամարտությունների կարգավորման դժվարությունները պայմանավորված են երեք խումբ խնդիրներով: Առաջինը հատուկ է գրեթե բոլոր էթնոքաղաքական հակամարտություններին, երկրորդը պայմանավորված է հետխորհրդային տրանսֆորմացիայի դժվարություններով, երրորդը՝ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությամբ: Նոր աշխարհակարգի ձևավորման վերջին փուլը լրջորեն սրեց իրավիճակը, քանի որ «սառեցված» հակամարտությունները դարձան իրավիճակի կառավարման կարևոր լծակներ ազդեցիկ պետությունների համար (Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքում՝ 2008թ., իսկ Լեռնային Ղարաբաղի դեպքում՝ 2016թ.):

Վերոնշյալ խնդիրները հարավկովկասյան հակամարտությունները դարձնում են խիստ բարդ կարգավորման տեսակետից: Այս համատեքստում առաջնային կարևորություն է ստանում հակամարտությունների կարգավորման գործընթացների ուսումնասիրությունը՝ կարգավորման գործընթացի վրա ազդող գործոններն ու հիմնական օրինաչափությունները բացահայտելու առումով: Հակամարտությունների կարգավորման գործընթացների վերլուծություններն ու դրա հիման վրա կատարվող կանխատեսումներն, իրապես, կարող են լուրջ ազդեցություն ունենալ հետագա առճակատումները կանխելու կամ հակամարտության զարգացումը ռազմական փուլ չտեղափոխելու առումով:

Թեև վերջին տասնամյակների ընթացքում հակամարտությունների կարգավորման գործընթացների ուսումնասիրության նպատակով բավական հաճախ է կիրառվում համեմատական վերլուծության մեթոդը, սակայն հակամարտությունների կարգավորման գործընթացների ուսումնասիրման մոդելավորումը դժվար է խնդրի բարդության և մեծ թվով տարաբնույթ գործոնների առկայության պատճառով: Նման ուսումնասիրությունների ամբողջական մոդելավորման և ռազմավարության բացակայությունը նվազեցնում է ուսումնասիրությունների արդյունավետությունն ու վստահությունը դրանց արդյունքների նկատմամբ: Մինչդեռ հակամարտությունների համեմատական ուսումնասիրության ռազմավարության մոդելավորումը հնարավորություն է տալիս բարձր հավաստիությամբ գնահատել հակամարտությունների կարգավորման գործընթացները, տարբեր ընթացքների

պատճառներն ու խոչընդոտող գործոնները, կարգավորման գործընթացների զարգացման ընդհանուր միտումները, արդյունավետության բարձրացման հնարավորությունները և այլն:

Հարավային Կովկասի հակամարտություններն ունեն մի շարք նմանություններ, սակայն տարբերություններ ևս առկա են: Առաջին ու կարևոր տարբերությունը կապված է հակամարտությունների բնույթի հետ (ինքնորոշման և ոչ ինքնորոշման հակամարտություններ): Հարավային Կովկասի հակամարտությունները միմյանցից տարբերվում են նաև քաղաքական (աշխարհաքաղաքական), իրավական, տնտեսական, պատմական և այլ առանձնահատկություններով, որոնցով պայմանավորված՝ կարգավորման գործընթացները նույնպես տարբերվում են միմյանցից: Այդուհանդերձ, այս գործընթացների ուսումնասիրումը թույլ է տվել վերհանել որոշակի օրինաչափություններ, որոնք հնարավորություն են տալիս մեծացնել այդ հակամարտությունների վերլուծությունների արդյունքների հավաստիությունը:

Ատենախոսության մեջ անդրադարձ է կատարվում ոչ միայն հակամարտությունների առաջացման, զարգացման ու կարգավորման գործընթացների առանձնահատկությունների վերհանմանը, այլ նաև հետկոնֆլիկտային հասարակություններում ժողովրդավարացման խթանման գործընթացներին՝ մասնավորապես դիտարկելով Հարավային Կովկասի չճանաչված պետություններում ժողովրդավարացման գործընթացների վրա ազդող հիմնական գործոնները, խոչընդոտները, ինչպես նաև ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման ու արդյունավետ գործունեության ազդեցությունը հակամարտության կարգավորման ու ճանաչման գործընթացի վրա: Հարավային Կովկասի բոլոր երեք չճանաչված պետություններն էլ անկախության հռչակումից ի վեր հայտարարել են ժողովրդավարական պետություն կառուցելու նպատակի մասին և ուղղել իրենց ջանքերն այդ ուղղությամբ՝ առաջընթաց գրանցելու նպատակով: Այս համատեքստում քննարկվել են նաև դիտարկված պետություններում բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման գործընթացի առանձնահատկությունները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ բազմակուսակցական համակարգն առանցքային գործոն է ժողովրդավարական պետության կառուցման գործում, ավելին, այն թույլ կտա պարզել, թե արդյոք այդ պետություններին բնորոշ են իրական ժողովրդավարական հատկանիշները: Այնուամենայնիվ, իրական ժողովրդավարական արժեքների վրա հիմնված պետության կառուցման ճանապարհին չճանաչված պետությունները բախվում են լրացուցիչ բարդությունների, որոնք պայմանավորված են նաև ճանաչված չլինելու հանգամանքով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հարավային Կովկասի հակամարտությունների, դրանց կարգավորման գործընթացներում առկա նմանությունների ու տարբերությունների, խոչընդոտների, ինչպես նաև

հետևյալ փուլի մարտահրավերների հաղթահարման, ժողովրդավարացման, պետական կայուն ինստիտուտների ստեղծման ու արդյունավետ գործունեության, տնտեսական զարգացածության ու համագործակցային մթնոլորտի ստեղծման հետ առնչվող խնդիրների ուսումնասիրությունն առավել քան արդիական է:

**Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը:**

Հակամարտությունների ու դրանց կարգավորման գործընթացների ուսումնասիրությանն առնչվող խնդիրներն՝ իրենց ամենատարբեր դրսևորումներով, մշտապես գտնվում են քաղաքագետների, պատմաբանների, փիլիսոփաների, սոցիոլոգների ուշադրության կենտրոնում: Հիմնական պատճառներից մեկն այն է, որ միջազգային հակամարտությունների թիվն աշխարհում ոչ միայն չի կրճատվում, այլ նաև, որոշ դեպքերում, հանգեցնում է նոր բախումների թատերաբեմերի առաջացման առանցքային նշանակություն ունեցող այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Մերձավոր Արևելքը, Հարավային Կովկասը, Բալկանները և այլն:

Ատենախոսության թեմայի շրջանակներում դիտարկվել են հակամարտությունների առաջացման, զարգացման փուլերի, կարգավորման գործընթացների առանձնահատկությունների բացահայտմանը նվիրված գիտական աշխատանքներն ու միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված հիմնարար փաստաթղթերը<sup>1</sup>, քննարկվող երևույթների շրջանակը հստակեցնելու և միջազգային իրավունքի շրջանակներում հակամարտությունների կարգավորման հեռանկարները դիտարկելու նկատառումով: Կարևոր նշանակություն է ունեցել հակամարտությունների վերլուծության ժամանակ ամենահաճախը կիրառվող մեթոդների<sup>2</sup>, մասնավորապես, համեմատական վերլուծության մեթոդի<sup>3</sup> կիրառման

---

<sup>1</sup> Charter of the United Nations, <http://www.un.org/en/documents/charter/>; Declaration on Principles of International Law Friendly Relations and Cooperation among States in Accordance with the Charter of the United Nations <https://www.un.org/ruleoflaw/files/3dda1f104.pdf>; Helsinki Final Act, <http://www.osce.org/mc/39501> .

<sup>2</sup> Barasko M., Sabet D., Schaffner B., Understanding Political Science Research Methods: The Challenge of Inference, New York, Taylor & Francis, 2014; Neuman L., Social Research Methods: Qualitative and Quantitative Approaches, Seventh Edition, US, Pearson Education Limited, 2014; Marshall C., Gretchen R., Designing Qualitative Research, 3rd ed. Thousand Oaks, CA, Sage Publications, 2015; Bennett A., Tracy S., Qualitative Research Methods, West Sussex, A John Wiley & Sons Ltd. Publication, 2013.

<sup>3</sup> Apter D., Comparative Politics, Old and New. A New Handbook of Political Science, New York, Oxford University Press, 1996; Mill J., How We Compare, Comparative Political Systems, New-York, Oxford University Press, 1991; Lijphart A., Comparative Politics and Comparative Method, The American Political Science Review, 1971, Vol. 65, № 3, pp. 682-693; Թորոյան Ս., Պետրոյան Մ., Հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, Հայկական քաղաքագիտական հանդես, 2015, № 1, էջ 135-159:

անհրաժեշտության ու առանձնահատկություններին վերաբերող աշխատանքների ուսումնասիրությունը: Համեմատական ուսումնասիրությունների ժամանակ կիրառվող փոփոխականների<sup>4</sup> ընտրությունն առանցքային նշանակություն ունի, քանզի, շատ հաճախ, փոփոխականների ոչ ճշգրիտ ընտրությունը կարող է հանգեցնել սխալ եզրակացության, ոչ արդյունավետ քաղաքականության ձևավորման, հետազոտությունը կարող է ներկայացնել բոլորովին այլ պատկեր: Ըստ համեմատական վերլուծության ժամանակ կիրառվող չափանիշների, առանձնացվել են Լեռնային Ղարաբաղի<sup>5</sup>, Հարավային Օսիայի<sup>6</sup> և Աբխազիայի<sup>7</sup> հակամարտությունների բնորոշ հատկանիշները:

Առանձնակի ուշադրություն է դարձվել չճանաչված պետությունների ներքին և արտաքին քաղաքականության հիմնական միտումներին՝ դիտարկելով դրանք ճանաչման գործընթացի համատեքստում<sup>8</sup>: Ճանաչման տեսանկյունից

---

<sup>4</sup>Ragin Ch., The Comparative Method, Beyond Qualitative and Quantitative Strategies, California, University of California Press, 2014; King G., Keohane R., Verba S., Designing Social Inquiry- Scientific Inference in Qualitative Research, New Jersey, Princeton University Press, 1994; Baur N., Lamnek S., Variables, The Blackwell Encyclopedia of Sociology, 2007, pp. 1-7; Raiphea Y., Variable: Classification, Measurement and Importance in Social Science Research, Journal of Business Management & Social Sciences Research, 2015, Vol. 4, № 6, pp. 435-438.

<sup>5</sup>Минасян С., Нагорный Карабах после двух десятилетий конфликта: неизбежная пролонгация статус-кво?, Ереван, Институт Кавказа, 2010; Zurcher Ch., The Post-Soviet Wars, New York and London, New York University Press, 2007; Geukjian O., Ethnicity, Nationalism and Conflict in the South Caucasus, Beirut, USA, Ashgate Publishing Company, 2012; Broers L., The Nagorno Karabakh Conflict: Defaulting to War, London, The Royal Institute of International Affairs, 2016; Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2012:

<sup>6</sup>Маркедонов С., Де-факто образования постсоветского пространства: Двадцать лет государственного строительства, Доклады Института Кавказа, 2012, № 5; Чугаенко Ю. , Грузия– Южная Осетия: исторические первопричины противостояния, Киев, Национальная академия управления, 2013; Cornell S., Small Nations and Great Powers: A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus, London, Curzon Press, 2001.

<sup>7</sup>Ачугба Т., История Абхазии в датах, Сухум, «Дом печати», 2011; Авидзба А., Проблемы военно-политической истории Отечественной войны в Абхазии (1992-1993 гг.) Книга I, Сухум, «Дом печати», 2013; Трагедия Абхазии, Грузия на суд Российской общественности, Главный редактор Джемал Гамахария, Сухум, Издательство «Саари», 2016.

<sup>8</sup>Beachain D., Comai G., Tsurtsunia-Zurabashvili A., The Secret Lives of Unrecognised States: Internal Dynamics, External Relations, and Counterrecognition Strategies, Small Wars & Insurgencies, 2016, Vol. 27, № 3, pp. 440-466; Պետրոսյան Վ., Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման խնդիրն ու կապը միջազգային ճանաչման հետ, Հայկական քաղաքագիտական հանդես, 2017, № 2, էջ 31-64.

կարևորվում է նաև քաղաքական համակարգի կայունության խնդիրը, այդ թվում՝ արտաքին գործոնները, «հովանավոր» պետության աջակցությունը, մետրոպոլիայի ազդեցությունը, ինքնորոշման իրավունքի մեկնաբանության ու կիրառման հետ կապված խնդիրները<sup>9</sup>: Տարածաշրջանի չճանաչված պետությունների ժողովրդավարացումը ևս դիտարկվել է տարբեր հեղինակների կողմից<sup>10</sup>, այնուամենայնիվ այս պետություններում բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման վերաբերյալ հիմնարար աշխատանքները բացակայում են:

Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ուսումնասիրությանն ու համեմատական վերլուծությանը նվիրված մի շարք աշխատանքներ կան: Պ. Կոլստոն և Հ. Բլակկիսրուդը<sup>11</sup> հարավկովկասյան չճանաչված պետությունների համեմատական վերլուծության ընթացքում դիտարկել են պետականաշինության և ճանաչմանն առնչվող խնդիրները, Զ. Լ՛Նուլինը, Վ. Կոլստոլը և Զ. Տոալը<sup>12</sup> կիրառել են փոփոխականներ, որոնք վերաբերում են հասարակական կարծիքի ու վարքագծի ձևավորման առանձնահատկություններին և դրանց վրա աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությանը: Ն. Կասպերսենը անդրադարձել է հակամարտությունների կարգավորման ու հետկոնֆլիկտային փուլի խնդիրներին<sup>13</sup>: Է. Սուլեյմանովը<sup>14</sup> խնդիրը դիտարկում է էթնոքաղաքական

---

<sup>9</sup> MacFarlane, N., Sabanadze, N., Sovereignty and Self-determination: Where are we?, International Journal: Canada's Journal of Global Policy Analysis, 2013, Vol. 68, № 4, pp. 609–627; Czachor R., Between Sustainability and Uncertainty. Political Systems of Abkhazia, South Ossetia and the Nagorno-Karabakh Republic– conditions and features, SECTIO, 2015, Vol. 12, № 1, pp. 151-163.

<sup>10</sup> Caspersen N., The South Caucasus after Kosovo: Renewed Independence Hopes?, Europe-Asia Studies, 2013, Vol. 65, № 5, pp. 929-945; Krause K., Jütersonke O., Peace, Security and Development in Post-Conflict Environments, Security Dialogue, 2005, Vol. 36(4), pp. 447–462; Կիրակոսյան Մ., Հետկոնֆլիկտային հասարակություններում ժողովրդավարացման խթանման հնարավորությունները միջազգային կառավարման ճանապարհով, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2016, № 2 (6), էջ 65-88;

<sup>11</sup> Kolsto P., Blakkisrud H., Living with Non-recognition: State and Nation-building in South Caucasian Quasi-states, Europe-Asia Studies, 2008, Vol. 60, № 3, pp. 483-509; Blakkisrud H., Kolstø P., Dynamics of de Facto statehood: the South Caucasian de facto states between secession and sovereignty, Southeast European and Black Sea Studies, 2012, Vol. 12, № 2, pp. 281-298.

<sup>12</sup> O'Loughlin J., Kolosov V., Toal G., Inside the Post-Soviet de Facto States: a Comparison of Attitudes in Abkhazia, Nagorny Karabakh, South Ossetia, and Transnistria, Eurasian Geography and Economics, № 55, 2015, pp. 1-34.

<sup>13</sup> Caspersen N., The South Caucasus after Kosovo: Renewed Independence Hopes?, Europe-Asia Studies, 2013, Vol. 65, № 5, pp. 929-945.

<sup>14</sup> Souleimanov E., Understanding Ethnopolitical Conflict: Karabakh, South Ossetia, Abkhazia, Prague, Palgrave Macmillan, 2013, 249 p.

հակամարտությունների կարգավորման շրջանակներում: Բ. Զուրչերը<sup>15</sup>, Ս. Կորնելը<sup>16</sup>, Ս. Մարկեդոնովը<sup>17</sup> Հարավային Կովկասի հակամարտություններին անդրադարձ են կատարում կովկասյան տարածաշրջանի հակամարտությունների ուսումնասիրության համատեքստում՝ դիտարկելով դրանք ԽՍՀՄ փլուզման գործընթացի շրջանակներում:

Այնուամենայնիվ, վերոնշյալ բոլոր աշխատանքներում պարզորոշ հստակեցված չեն հակամարտությունների համեմատական վերլուծության ռազմավարությունը և չի հիմնավորվում այն կամ այն փոփոխականի կամ փոփոխականների համախմբի ընտրությունը, ինչի արդյունքում ուշադրությունից դուրս են մնում հակամարտության կարգավորման գործընթացի վրա ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեցող կարևորագույն գործոնները: Այդ աշխատանքներում բացակայում է փոփոխականների ընտրության համակարգային մոտեցումը, ինչի արդյունքում հնարավոր չի լինում հստակ ձևավորել ուսումնասիրվող խնդիրների համալիր շրջանակը:

Հատկանշական է, որ հայկական քաղաքագիտական շրջանակներում Հարավային Կովկասի հակամարտությունների համեմատական վերլուծությանը նվիրված աշխատանքերը սակավաթիվ են: Աշխատանքները հիմնականում նվիրված են տարածաշրջանի այս կամ այն հակամարտության կարգավորման գործընթացին ու դրա ազդեցությանը խաղաղության ու կայունության պահպանման վրա: Ընդ որում, այդ աշխատանքների գերակշռող մասը նվիրված է Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատմության ու կարգավորման գործընթացի առանձնահատկությունների բացահայտմանը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակն է վերհանել Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ընդհանրություններն ու առանձնահատկությունները, պարզել հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա ազդող հիմնական գործոնները, ժողովրդավարացման գործընթացի հիմնական առանձնահատկություններն ու տարբեր ինտեգրման միավորումների հետ համագործակցության հեռանկարները:

Առաջադրված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել հակամարտությունների ուսումնասիրման ժամանակ կիրառվող հիմնական մեթոդներն ու դրանց կիրառման առանձնահատկությունները:

---

<sup>15</sup> Zurcher Ch., The Post-Soviet Wars, New York, London, New York University Press, 2007

<sup>16</sup> Cornell S., Small Nations and Great Powers: A Study of Ethnopolitical Conflicts in the Caucasus, London and New York, Routledge Curzon, 2001.

<sup>17</sup> Маркедонов С., Де-факто образования постсоветского пространства: Двадцать лет государственного строительства, Доклады Института Кавказа, 2012, № 5.



- Վերհանել հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները:
- Մշակել հակամարտությունների համեմատական վերլուծության ռազմավարություն, ինչպես նաև հակամարտությունների համեմատական վերլուծության նոր մոդել:
- Առանձնացնել Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների հատկանիշներն ըստ համեմատական վերլուծության համար ընտրված փոփոխականների համախմբի:
- Բացահայտել Հարավային Կովկասի հակամարտությունների, ինչպես նաև կարգավորման գործընթացների առանձնահատկություններն ու ընդհանրությունները՝ ատենախոսության շրջանակներում մշակված համեմատական վերլուծության մոդելի հիման վրա:
- Գնահատել Լեռնային Ղարաբաղում, Հարավային Օսիայում և Աբխազիայում հետկոնֆլիկտային փուլում ժողովրդավարության խթանման արդյունավետությունը հակամարտությունների կարգավորման գործընթացների համատեքստում:
- Վերհանել Հարավային Կովկասի չճանաչված պետությունների բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման օրինաչափություններն ու այդ գործընթացի վրա ազդող հիմնական գործոնները:
- Պարզել Հարավային Կովկասի չճանաչված պետությունների ինտեգրման հնարավորություններն ու ազդեցությունը միջազգային ճանաչման գործընթացի վրա:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Ատենախոսության օբյեկտն է Հարավային Կովկասի հակամարտություններն ու դրանց կարգավորման գործընթացների ընդհանրություններն և առանձնահատկությունները: Ատենախոսության առարկան են Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա ազդող հիմնական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, ինչպես նաև այդ գործոնների ազդեցությունը հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարման վրա:

**Ատենախոսության տեսամեթոդական հիմքը:** Ատենախոսության տեսական հիմքը կազմում են մենագրություններ, գիտական հոդվածներ, վերլուծություններ, Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորմանն առնչվող միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևեր, կարգավորման փաստաթղթեր, միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթեր՝ հակամարտությունների կարգավորման իրավական բաղադրիչի առանձնահատկություններն ու կիրառման շրջանակը հստակեցնելու նպատակով:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են համընդհանուր, միջգիտակարգային մեթոդներ՝ ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ,

վերացարկում, ինչպես նաև նեղ մասնագիտական մեթոդներ, մասնավորապես, կիրառվել են համեմատական, առանձին դեպքի ուսումնասիրության, վիճակագրական ուսումնասիրության, իրադարձությունների վերլուծության և մոդելավորման մեթոդները: Կարգավորման գործընթացի առանցքային փաստաթղթերի, միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևերի ուսումնասիրության ընթացքում կիրառվել են փաստաթղթերի ուսումնասիրության և համատեքստի վերլուծության (content analysis) մեթոդները:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Հետազոտության շրջանակներում վեր են հանվել Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների նմանություններն ու տարբերությունները: Ատենախոսության շրջանակներում մշակված համեմատական վերլուծության մոդելի հիման վրա կատարված հետազոտությունը թույլ է տվել հստակեցնել կարգավորման գործընթացի վրա ազդող առանցքային գործոնները, փոփոխականների միջև առկա կապերը: Աշխատանքում առանձնակի ուշադրություն է դարձվել Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարման գործընթացներին:

Ատենախոսության գիտական նորույթը կարելի է ներկայացնել հետևյալ դրույթներով՝

- Մշակվել և շրջանառության մեջ է դրվել հակամարտությունների համեմատական վերլուծության նոր ռազմավարություն, որը ենթադրում է երեք հաջորդական քայլերի իրականացում՝ հակամարտության բնույթի որոշում, հակամարտությունների համեմատական վերլուծություն (հետազոտության խնդրի ձևավորում, փոփոխականների համախմբի ընտրություն և փոփոխականների մոդելի ձևավորում), ընտրված փոփոխականների հիման վրա իրականացվող վերլուծություն:
- Կազմվել է հակամարտությունների համեմատական վերլուծության փոփոխականների դասերի սխեմա, որում ներկայացված դասերն են՝ հակամարտությունների զարգացման հիմնական փուլեր, հակամարտության բնույթ և հանրաքվեի անցկացման պայմաններ, միջազգային դատական ատյաններին դիմելու հնարավորություններ, կարգավորման սկզբունքների շրջանակ, միջնորդների ներգրավում, փախստականների խնդրի առկայություն:
- Փոփոխականների դասերի սխեմայի հիման վրա առաջին անգամ մշակվել և գիտականորեն հիմնավորվել է հակամարտությունների համեմատական վերլուծության ժամանակ կիրառվող նոր մոդել, որի շրջանակներում խնդիրները դիտարկվում են ինը տարբեր խմբերում (նախակոնֆլիկտային, բուն կոնֆլիկտային, հետկոնֆլիկտային փուլեր, հակամարտության բնույթ, հանրաքվե, կարգավորման սկզբունքներ/միջազգային իրավունք,

միջնորդների ներգրավում, միջազգային դատական ատյաններ, փախստականների խնդիր):

- Բացահայտվել են Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների ընդհանրություններն ու առանձնահատկությունները համեմատական վերլուծության մոդելի հիման վրա, ներկայացվել են կարգավորման գործընթացի վրա ազդող հիմնական խոչընդոտները, միջազգային իրավունքի սկզբունքների կիրառման դժվարությունները, միջնորդական ձևաչափերի և, առհասարակ, միջնորդական գործունեության արդյունավետությունը:
- Հիմնավորվել է, որ թեև տարածաշրջանի չճանաչված պետությունները ժողովրդավարացման գործընթացում առաջընթաց գրանցել են (հատկապես Լեռնային Ղարաբաղը), սակայն այդ առաջընթացը չի կարող ճանաչման գործընթացի հաջող ելքն ապահովող հիմնական գործոնը լինել: Ժողովրդավարական պետության ստեղծումը կարող է նպաստել հետպատերազմական փուլի մարտահրավերների հաղթահարմանը և դիտարկվել միայն որպես լրացուցիչ խթան:
- Բացահայտվել է, որ Հարավային Կովկասի չճանաչված պետություններում բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման վրա մեծ ազդեցություն ունի այդ պետությունների միջազգային ճանաչման գործընթացն ու հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարումը, ինչպես նաև նման համակարգերի վերաբերյալ գիտելիքների ու փորձի բացակայությունը:
- Ապացուցվել է, որ ինտեգրման տարբեր միավորումների՝ հակամարտությունների կանխարգելման և կարգավորման հարցում ունեցած դերակատարությունը միանշանակ չէ (անդամակցություն կամ սերտ համագործակցություն): Ինտեգրման միավորումների հետ ակտիվ ու սերտ համագործակցությունը կարող է արդյունավետ լինել հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարման տեսանկյունից, սակայն չի կարող որոշիչ լինել հակամարտության կարգավորման կամ միջազգային ճանաչման տեսանկյունից:

**Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը:**

Աշխատանքում ներկայացված մոտեցումները, գաղափարները, վերլուծությունները հարստացնում են քաղաքագիտության խնդրային ու առարկայական դաշտը՝ մասնավորապես, շրջանառության մեջ դնելով հակամարտությունների համեմատական վերլուծության նոր ռազմավարություն, համեմատական ուսումնասիրությունների ժամանակ կիրառվող փոփոխականների դասերի նոր սխեմա, ինչպես նաև փոփոխականների համախմբի նոր մոդել՝ այսպիսով նպաստելով հակամարտությունների համեմատական վերլուծությանն ու հավաստի կանխատեսումների իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել հակամարտությունների համեմատական վերլուծության ռազմավարության մշակման, փոփոխականների համախմբերի ընտրության և հակամարտությունների կարգավորման գործընթացների վերլուծության արդյունավետության բարձրացման համար: Ատենախոսության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտաուսումնական և մեթոդական ծրագրերի ապահովման, հատուկ կուրսերի, դասընթացների և ձեռնարկների պատրաստման համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:**

Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են 7 գիտական հոդվածներում: Հետազոտության առանձին դրույթներ զեկուցվել և քննարկվել են միջազգային գիտաժողովների ընթացքում, այդ թվում՝ «Հետխորհրդային տրանսֆորմացիայի 25 տարին. Արդյունքներ և հեռանկարներ» միջազգային գիտաժողով, Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն, (Հոկտեմբերի 28-29, 2016 թ.), «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային գիտաժողով, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում, (Սեպտեմբերի 14-16, 2016թ.), «Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով», Արցախի պետական համալսարան, (Մարտի 15-17, 2018 թ.), «Հայաստան և հարևաններ. Տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումները ՀՀ ազգային անվտանգային շահերի տեսանկյունից», ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան, (Դեկտեմբերի 23, 2019 թ.), «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրման 85-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով», Շիրակի պետական համալսարան (Նոյեմբերի 8-9, 2019թ.) և այլն, ինչպես նաև գիտական սեմինարների և աշխատաժողովների ժամանակ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում (2016-2019 թթ.), Մեսրոպ Մաշտոց համալսարանում (2017 թ.), «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանում (2018 թ.) և այլն:

Ատենախոսության որոշ դրույթներ քննարկվել և շրջանառության մեջ են դրվել «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի (Մոսկվա, Ռուսաստան) Համաշխարհային տնտեսագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հատուկ դասընթացներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ տասը ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 186 էջ է:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված է խնդրի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, աշխատանքի գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ վերնագրված «**Հակամարտությունների հետազոտության մեթոդներն ու համեմատական ուսումնասիրությունների մոդելավորման խնդիրները**», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Քաղաքագիտական մեթոդներն ու դրանց կիրառումը հակամարտությունների վերլուծության ժամանակ**» վերնագրով, ներկայացվել են հակամարտությունների վերլուծության ժամանակ ամենահաճախ կիրառվող քաղաքագիտական մեթոդները, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև վեր է հանվել կիրառվող մեթոդների ընտրության հնարավոր ազդեցությունը հետազոտության արդյունքների հավաստիության վրա:

Երկրորդ ենթագլխում՝ «**Հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները**» վերնագրով, քննարկվել են հակամարտությունների ուսումնասիրության ժամանակ համեմատական մեթոդի կիրառմանն առնչվող խնդիրներ: Վեր են հանվել համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, առաջարկվել է հակամարտությունների ուսումնասիրման ռազմավարության ընդհանուր սխեմա:

Երրորդ՝ «**Փոփոխականների համախմբի ընտրության խնդիրը հակամարտությունների համեմատական ուսումնասիրությունների ժամանակ**» ենթագլխում քննարկվել են հակամարտությունների համեմատական վերլուծության ընթացքում կիրառվող փոփոխականների համախմբի ընտրությանը, ինչպես նաև ընտրված փոփոխականների համախմբի հիման վրա իրականացված հետազոտության հավաստիությանն առնչվող հարցեր: Վերլուծվել են փոփոխականների տեսակներն ու գնահատվել է փոփոխականների փոխկապակցվածությունը: Ներկայացվել են փոփոխականների դասերը և դասերի հիման վրա ձևավորված հակամարտությունների համեմատական վերլուծության նոր մոդելը:

Երկրորդ գլխում՝ վերնագրված «**Հարավային Կովկասի հակամարտությունների հատկանիշներն ըստ համեմատական վերլուծության ժամանակ օգտագործվող չափանիշների**», ներկայացվել են Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների հատկանիշներն ըստ համեմատական վերլուծության մոդելում ներառված փոփոխականների համախմբի, իրականացվել է հակամարտությունների համեմատական վերլուծություն:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «**Լեռնային Ղարաբաղի դեպքը**» վերնագրով, վերլուծվել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության ծագումը

պայմանավորող գործոնները, բնույթը, հակամարտության ձևավորման և զարգացման, կարգավորման իրավական և քաղաքական բաղադրիչի առանձնահատկությունները: Քննարկվել են հակամարտության կարգավորման շուրջ ընթացող բանակցային գործընթացին, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության արդյունավետությանն առնչվող հարցեր, 2016թ. ապրիլյան իրադարձությունների պատճառներն ու հետևանքները:

Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված «**Հարավային Օսիայի դեպքը**» քննարկվել են Հարավային Օսիայի հակամարտության առաջացման նախադրյալները, հակամարտության՝ ռազմական փուլ տեղափոխվելու պատճառներն ու հետևանքները: Վերլուծվել են հարավօսական հակամարտության բնույթը, կարգավորման իրավական հնարավոր մեխանիզմները, բանակցային գործընթացի առանձնահատկությունները: Ներկայացվել են 2008թ, ռուս-վրացական պատերազմի պատճառներն ու հետևանքները, ինչպես նաև ազդեցությունը հակամարտության կարգավորման ու ճանաչման գործընթացի վրա:

Երրորդ՝ «**Աբխազիայի դեպքը**» ենթագլխում, ներկայացվել են արխազական հակամարտության բնույթը, ձևավորման պատմությունը, զարգացման հիմնական փուլերը, փուլերը պայմանավորող գործոնները: Քննարկվել են հակամարտության ռազմական փուլի պատճառներն ու հետևանքները, բանակցային գործընթացի առանձնահատկությունները, ինչպես նաև 2008թ, ռուս-վրացական պատերազմի հետևանքներն ու ազդեցությունը կարգավորման գործընթացի վրա:

Չորրորդ ենթագլխում՝ վերնագրված «**Հարավային Կովկասի հակամարտությունների համեմատական վերլուծություն**» վեր են հանվել Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների, դրանց կարգավորման գործընթացների ընդհանրություններն ու տարբերությունները ատենախոսության շրջանակներում առաջարկված համեմատական վերլուծության մոդելի հիման վրա: Վերլուծվել են հակամարտությունների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված բանաձևերը հակամարտության կարգավորման վերաբերյալ միջազգային հանրության մոտեցումներն ուրվագծելու նպատակով:

Երրորդ՝ «**Ժողովրդավարացման ազդեցությունը հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա: Հարավային Կովկասի դեպքը**» գլխում ներկայացվել են հետկոնֆլիկտային հասարակություններում ժողովրդավարացման խթանման գործընթացի առանձնահատկությունները, ինչպես նաև Հարավային Կովկասի չճանաչված պետություններում բազմակուսակցական համակարգերի ձևավորմանն ու միջազգային ինտեգրմանն առնչվող հարցեր:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ վերնագրված «**Ժողովրդավարության խթանման գործընթացը հետկոնֆլիկտային**

**հասարակություններում»**, քննարկվել են Հարավային Կովկասի չճանաչված պետություններում ժողովրդավարական արժեքների ներդրման ու ամրապնդման գործընթացները, պետական ինստիտուտների արյունավետ գործունեության խոչընդոտները: Վերլուծվել են Լեռնային Ղարաբաղում, Հարավային Օսիայում և Աբխազիայում ժողովրդավարացման գործընթացում գրանցած արդյունքներն ու դրա հնարավոր ազդեցությունը ճանաչման գործընթացի վրա:

Երկրորդ՝ **«Քազմակուսակցական համակարգի ձևավորման ու կայացման խնդիրը Հարավային Կովկասի չճանաչված պետություններում»** ենթագլխում ներկայացվել են Լեռնային Ղարաբաղում, Հարավային Օսիայում և Աբխազիայում բազմակուսակցական համակարգերի ձևավորման հնարավորությունները, համապատասխան իրավական հիմքերը: Վեր են հանվել այդ գործընթացում արդեն իսկ գրանցած հաջողությունները, հիմնական խոչընդոտներն ու ազդեցությունը ժողովրդավարացման գործընթացների վրա:

Երրորդ գլխի երրորդ՝ **«Հարավային Կովկասի չճանաչված պետությունների միջազգային ինտեգրման հնարավորությունները»** ենթագլխում քննարկվել են Հարավային Կովկասի չճանաչված պետությունների՝ ինտեգրման տարբեր միավորումներին անդամակցության կամ տնտեսական համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև հնարավոր ազդեցությունը միջազգային ճանաչման գործընթացի վրա:

**Եզրակացության** մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալը.

1. Հակամարտությունների ուսումնասիրության ընթացքում համեմատական մեթոդի կիրառման արդյունավետության ապահովման տեսակետից առանցքային նշանակություն ունի համեմատվող հակամարտությունների բնույթների հստակեցումն ու համեմատության փոփոխականների համախմբերի ընտրությունը: Համեմատվող հակամարտությունների բնույթը որոշվում է՝ հաշվի առնելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները: Ըստ այդմ, հակամարտությունները բաժանվում են երկու խմբի՝ ինքնորոշման և ոչ ինքնորոշման: Փոփոխականների համախմբի ընտրությունը պայմանավորված է հետազոտական խնդրի դրվածքով: Առանցքային նշանակություն ունի փոփոխականների այնպիսի համախմբերի ձևավորումը, որոնցից յուրաքանչյուրը կիրառելի կլինի այս կամ այն դասին պատկանող դեպքերի համար: Յուրաքանչյուր դասի փոփոխականների համախումբ պետք է միաժամանակ բավարարի անհրաժեշտ և բավարար լինելու պայմաններին:
2. Հակամարտությունների ուսումնասիրության նպատակով առաջարկվում են բազմաթիվ փոփոխականների համախմբեր, դրանց վերլուծության մեխանիզմներ, մոդելներ: Այդուհանդերձ, միշտ չէ, որ այդ մոդելներում ներառված փոփոխականները անհրաժեշտ, առավել ևս բավարար են վերլուծելու համար հակամարտության այս կամ այն բաղադրիչին վերաբերող

որչ Էմպիրիկ բազան: Ատենախոսություն մեջ առաջարկվող փոփոխականների դասակարգման սխեմայի հիման վրա ձևավորված հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելը հնարավորություն է տալիս վերլուծել հակամարտության առաջացման և կարգավորման գործընթացի վրա ազդող հիմնական գործոնները, կրճատել հակամարտությունների այս կամ այն բաղադրիչի արդյունավետ վերլուծության համար անհրաժեշտ փոփոխականների թիվը, դուրս չթողնել այնպիսի փոփոխականներ, որոնց անտեսումը կաղավաղի պատկերն ու կնվազեցնի եզրակացությունների հավաստիությունը: Ընդ որում, առաջարկվող դասակարգումն ու մոդելը կարող են կիրառվել ոչ միայն կոնկրետ դեպքի, այլ նաև առհասարակ հակամարտությունների ուսումնասիրության ժամանակ՝ ապահովելով օբյեկտիվ և համակողմանի վերլուծության համար անհրաժեշտ հիմքերը:

3. Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել մի շարք հիմնական ընդհանրություններ: Բոլոր երեք դեպքերում էլ այս տարածքները բռնակցվել են մետրոպոլիային կամայական ձևով՝ ԽՍՀՄ ձևավորման սկզբնական փուլում: Բողոքի ակցիաներ անցկացվել են բոլոր երեք դեպքերում էլ, ընդ որում, նմանատիպ խաղաղ ցույցերի ու հանրահավաքների անցկացումը սկսվել է մինչև վերակառուցման գործընթացի մեկնարկը: Մետրոպոլիայի կողմից ուժի անհամաչափ կիրառման դեպքեր գրանցվել են երեք հակամարտությունների պարագայում էլ՝ այդ թվում ոստիկանական ու ազգային գվարդիայի ստորաբաժանումների ներգրավվում, սակայն մեկ բացառությամբ: 1988թ.՝ ի պատասխան Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման պահանջի, Սումգայիթում, Բաքվում, Կիրովոբադում կազմակերպվեցին հայերի ջարդեր, որին զոհ գնացին տասնյակ հայեր և հազարավորները ստիպված եղան լքել իրենց մշտական բնակության վայրերը:
4. Երեք հակամարտությունների դեպքում էլ ռազմական բաղադրիչը նույնաբնույթ է: Սկզբնական շրջանում արձանագրված պահանջներին, դրանց մերժման դեմ իրականացված բողոքի խաղաղ ցույցերին մետրոպոլիան պատասխանել է լայնածավալ ռազմական ագրեսիայով: Լեռնային Ղարաբաղի դեպքում 1992-1994թթ. ագրեսիան է Ադրբեջանի կողմից: Հարավային Օսիայի դեպքում ռազմական գործողություններ տեղի են ունեցել 1991-1993թթ.՝ վրացական կողմի նախաձեռնությամբ, իսկ Աբխազիայում բախումները վերաճեցին պատերազմի 1992-1993թթ. :
5. Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում խաղաղապահ ուժեր չեն տեղակայվել: Խաղաղապահ ուժերի տեղակայման հարցը ներառված է «Մարդիկյան սկզբունքներ» անունը կրող փաստաթղթում և վեց հիմնական տարրերից մեկն է: Հարավային Օսիայի և Աբխազիայի դեպքում



հակամարտության գոտում տեղակայվել են խաղաղապահ զորամիավորումներ (ՄԱԿ-ի, ԱՊՀ-ի և ՌԴ-ի խաղաղապահ առաքելություններ): Հարավային Օսիայում և Աբխազիայում տեղակայված խաղաղապահ առաքելությունների՝ հակամարտության գոտիներում խաղաղության պահպանման գործում նրանց ջանքերը արդունավետ չեն եղել և հնարավոր չի եղել կանխել հետագա ռազմական գործողությունները:

6. Հատուկ կարգավիճակ ունեցել է միայն Լեռնային Ղարաբաղը 1989թ. հունվար-նոյեմբեր ամիսներին՝ Հատուկ կառավարման կոմիտեի միջոցով Մոսկվայի ուղիղ ենթակայությամբ: Հատուկ կարգավիճակը լուծարվել է ԽՍՀՄ ԳԽ որոշմամբ 1989թ.: Լեռնային Ղարաբաղի անկախությունը մինչ այսօր չի ճանաչվել ոչ մի պետության կողմից: 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո Ռուսաստանը ճանաչեց Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախությունը, այնուհետև անկախությունը ճանաչել են նաև ՄԱԿ անդամ մի քանի պետություններ: Հարավային Օսիայի և Աբխազիայի դեպքում ռազմական գործողությունները վերսկսվել են 2008թ. օգոստոսին՝ Վրաստանի նախաձեռնությամբ, ինչը հաստատվել է նաև ԵՄ-ի Անկախ միջազգային փաստահավաք առաքելության զեկույցը: Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունները վերսկսվել են 2016թ. ապրիլին ադրբեջանական կողմի նախաձեռնությամբ: Ընդ որում, եթե Հարավային Օսիայի և Աբխազիայի դեպքում երկու փուլերում էլ ռազմական գործողություններն իրականացել են հակամարտության գոտում միայն, ապա Լեռնային Ղարաբաղի դեպքում բռնություններ ու ռազմական գործողություններն առաջին փուլում տեղի են ունեցել նաև մետրոպոլիայի հայաբնակ տարածքներում, իսկ 2016թ. ապրիլին նաև ՀՀ սահմանի երկայնքով:
7. Երեք հակամարտությունների առանցքային տարբերություններից մեկը վերաբերում է հակամարտությունների բնույթին: Լեռնային Ղարաբաղի և Հարավային Օսիայի հակամարտությունները ինքնորոշման հակամարտություններ են, կարգավորման իրավական հիմքը ինքնորոշման իրավունքն է: Եվ Լեռնային Ղարաբաղում, և՛ Հարավային Օսիայում անցկացվել է անկախության հանրաքվե (համապատասխանաբար 1991թ. և 1992թ.), որի արդյունքում տիտղոսակիր ժողովուրդն օգտվել է իր կամարտահայտության իրավունքից: Երկու դեպքերում էլ հանրաքվեին մասնակցել է բնակչության ճնշող մեծամասնությունը՝ հանրաքվեի մասնակիցների ավելի քան 99%-ը կողմ են քվեարկել անկախությանը: Աբխազիայում 1999թ. անցկացվել է Աբխազիայի Սահմանադրության նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ հանրաքվե, որի արդյունքների հիման վրա հոկտեմբերի 12-ին ընդունվել է Աբխազիայի անկախության հռչակագիրը (87.6%-ը կողմ են քվեարկել): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աբխազիայում արխազները մեծամասնություն չեն կազմել,

իսկ հանրաքվեի արդյունքները շատ մոտ են նվազագույն անհրաժեշտին, հակամարտության բնույթի հարցը կարելի է համարել վիճելի:

8. Միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևերում (ՄԱԿ, ԵԽՏՎ) հստակ ձևակերպում չկա ԼՂ-ում անկախության հռչակման հետագա հնարավորությունների մասին, սակայն Հարավային Օսիայի և Աբխազիայի դեպքում անկախության հռչակումը բացառվում էր և խնդիրը դիտարկվում էր Վրաստանի տարածքային ամբողջականության ոտնահարման տեսակետից: Լեռնային Ղարաբաղի հետագա կարգավիճակի վերաբերյալ բանաձևերը լուծման որևէ հիմնական մոտեցում չեն պարունակում, առաջարկում են ընդունել ԵԱՀԿ Մինսկի խմբի հնարավոր առաջարկները: Ավելին, ըստ ԵԽՏՎ-ում ընդունված բանաձևերի, Լեռնային Ղարաբաղի բնակչությունն ունի ազատ կամարտահայտության իրավունք և ինքն է որոշելու իր հետագա կարգավիճակը ինքնորոշման իրավունքի հիման վրա: Ուստի վերոնշյալ երկու կազմակերպությունների կողմից ընդունված բանաձևերն ավելի շահեկան են Լեռնային Ղարաբաղի համար:
9. Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները բանակցային գործընթացում ներգրավված չեն: Հարավային Օսիայի և Աբխազիայի դեպքում այդ պետությունների ներկայացուցիչները բանակցային գործընթացին մասնակցել են ինչպես առաջին փուլում, այնպես էլ 2008թ.: Աբխազ և օս դիվանագետները հնարավորություն են ունեցել մասնակցելու Ժնևյան գործընթացի շրջանակներում տեղի ունեցող բանակցություններին:
10. Աբխազիան և հատկապես Լեռնային Ղարաբաղը Ժողովրդավարացման գործընթացում առաջընթաց գրանցել են, սակայն այդ առաջընթացը չի կարող ճանաչման գործընթացի հաջող ելքն ապահովող էական գործոնը լինել: Այն կարող է դիտարկվել միայն որպես լրացուցիչ խթան: Ժողովրդավարական պետության ստեղծումը կարող է նպաստել հետպատերազմական փուլի մարտահրավերների հաղթահարմանը՝ ամուր հիմքեր ստեղծելով միջազգային հանրության կողմից հակամարտության պարտադրված լուծման՝ ճանաչման համար: Ժողովրդավարությունը չի կարող ներդրվել, եթե դրա համար չկան անհրաժեշտ նախապայմաններ, քանզի արտաքին դերակատարները, այդ թվում և՛ առանձին պետությունները, և՛ միջազգային կազմակերպությունները, և՛ այդ հակամարտության կարգավորման նպատակով ստեղծված միջազգային խմբերը կամ կոալիցիաները կարող են խթանել այդ գործընթացը տարբեր գործիքների ու գործոնների օգնությամբ, բայց ոչ պարտադրել:
11. Հարավային Կովկասի չճանաչված պետությունները բազմակուսակցական համակարգերի ստեղծման ճանապարհին բախվեցին խնդիրների, որոնք ընդհանուր էին հետխորհրդային տարածքի ինչպես ճանաչված, այնպես էլ չճանաչված պետությունների համար: Չճանաչված պետություններում այդ խնդիրների լուծման վրա մեծ ազդեցություն ունի այդ պետությունների

միջազգային ճանաչման գործընթացն ու հետևյալ ֆիլիտային փուլի մարտահրավերների հաղթահարումը: Բազմակուսակցական համակարգի ձևավորման վրա առավել բացասական ազդեցություն ունի ոչ միայն նման համակարգերի վերաբերյալ գիտելիքների ու փորձի բացակայությունն, այլև հետևյալ ֆիլիտային շրջանում մեծ ազդեցություն ձեռք բերած ոչ ֆորմալ խմբերի ներգրավվածությունը պետության կառավարման գործընթացում:

12. Չճանաչված պետություններում հակամարտությունների կարգավորման խնդիրն առանցքային տեղ է գրավում կուսակցությունների ծրագրերում, քաղաքական գործընթացների վրա ունի մեծ ազդեցություն և հաճախ՝ որոշիչ ազդեցություն ընտրական գործընթացներում: Ուստի, էապես կարևոր է լիարժեք կուսակցությունների ձևավորումն՝ իրենց բնորոշ արժեքային հիմքով և կայունությամբ: Չճանաչված պետություններում առաջին և հիմնական մարտահրավերը կուսակցությունների մրցակցային համակարգ ստեղծելն է, քանզի չճանաչված պետություններում կուսակցությունների միջև մրցակցությունը, որոշ դեպքերում, դիտարկվում է որպես անկայունության աղբյուր և խոչընդոտ պետության կայացման գործընթացում:
13. Հարավային Կովկասի չճանաչված պետություններում կուսակցությունների ձևավորման օրենսդրական հիմքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, թեև դրանք չեն խոչընդոտում կուսակցությունների ստեղծմանն ու գործունեությանը, սակայն չկան նաև այդ գործընթացը խթանող հստակ մեխանիզմեր, իսկ ընտրություններին բնակչության մասնակցության թվի կրճատումը փաստում է ընտրական գործընթացների նկատմամբ բնակչության վստահության ցածր մակարդակի մասին: Դրական միտում նկատելի է միայն Արցախի Հանրապետությունում: Հետևյալ ֆիլիտային շրջանում անցկացված ընտրությունները մեծ նշանակություն ունեն հակամարտության կարգավորման գործընթացի հետ անմիջական կապի պատճառով, ինչպես նաև չճանաչված պետության հասարակական կյանքի կազմակերպման սկզբունքի ընտրության և հետևյալ ֆիլիտային փուլի խնդիրների հաղթահարման տեսանկյունից:
14. Ինտեգրման միավորումների՝ հակամարտությունների կանխարգելման և կարգավորման հարցում ունեցած դերակատարության արդյունավետությունը դեռևս միանշանակ չէ և, որոշ դեպքերում, առավելապես ոչ արդյունավետ: Ինտեգրման միավորումների հետ ակտիվ ու սերտ համագործակցությունը կարող է արդյունավետ լինել հետևյալ ֆիլիտային փուլի մարտահրավերների հաղթահարման տեսանկյունից, սակայն չի կարող որոշիչ լինել միջազգային ճանաչման տեսանկյունից: Միջազգային կազմակերպություններին (տնտեսական, քաղաքական և այլն) կարող են անդամակցել բացառապես ճանաչված պետությունները, սակայն համագործակցության տարբեր ձևաչափերի ստեղծումն առավել քան իրատեսական է:

**Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում.**

1. Պետրոսյան Մ., Հարավային Կովկասի չճանաչված պետությունների միջազգային ինտեգրման հնարավորությունները, Հայկական քաղաքագիտական հանդես, 2, Երևան, 2019, էջ 77-106:
2. Petrosyan M., The Classification of Variables in Comparative Study of Conflicts, Armenian Journal of Political Science, 2, Yerevan, 2018, pp. 59-78.
3. Պետրոսյան Մ., Միջնորդների դերը անլուծելի հակամարտությունների կարգավորման գործընթացում: Արցախի դեպքը, Գիտական Արցախ, 1, Երևան, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում (ԱԵԳՄՄ), 2018, էջ 228-232:
4. Պետրոսյան Մ., Բազմակուսակցական համակարգի ձևավորման ու կայացման խնդիրը Հարավային Կովկասի չճանաչված պետություններում, Հայկական քաղաքագիտական հանդես, 2, Երևան, 2017, էջ 65-96:
5. Պետրոսյան Մ., Բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման խնդիրը չճանաչված պետություններում: Արցախի դեպքը, ԱրՊՀ, Գիտական ընթերցումներ, Հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2017, էջ 224-230:
6. Պետրոսյան Մ., Լեռնային Ղարաբաղի և Հարավային Կովկասի մյուս հակամարտությունների կարգավորման գործընթացների իրավական և քաղաքական բաղադրիչները քառորդ դար անց, «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում (ԱԵԳՄՄ), 2016, էջ 200-205:
7. Պետրոսյան Մ., Թորոսյան Տ., Հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, Հայկական քաղաքագիտական հանդես, 1, 2015, էջ 135-159:

**ОСОБЕННОСТИ И ОБЩИЕ ЧЕРТЫ КОНФЛИКТОВ И ПРОЦЕССОВ ИХ  
УРЕГУЛИРОВАНИЯ НА ЮЖНОМ КАВКАЗЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы, международные отношения”.

Защита состоится 28 июля 2020г., в 12:00 часов, на заседании специализированного совета 056 "Политология" ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения.

**Резюме**

**Целью данной диссертационной работы** является выявление сходств и особенностей конфликтов Нагорного Карабаха, Абхазии и Южной Осетии и процессов их урегулирования, определение факторов, непосредственно влияющих на успешный процесс урегулирования, а также выявление особенностей продвижения процесса демократизации и перспективы сотрудничества с различными интеграционными объединениями.

В рамках исследования был проведен сравнительный анализ конфликтов Нагорного Карабаха, Абхазии и Южной Осетии согласно созданной модели сравнительного анализа (девять классов переменных). Это позволило выявить не только сходства и особенности характера, урегулирования и переговорных процессов вышеупомянутых конфликтов, но и рассмотреть возможности и перспективы урегулирования конфликтов в рамках международного права. Также были обсуждены особенности и влияние процесса демократизации на процесс международного признания. Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

В первой главе – **“Методы исследования конфликтов и проблемы моделирования сравнительных исследований”** - представлены особенности применения, преимущества и недостатки чаще всего применяемых политологических методов в анализе конфликтов. Были выявлены проблемы моделирования сравнительных анализов, представлена общая схема стратегии исследования конфликтов. Обсуждены вопросы, связанные с выбором группы переменных, используемых при сравнительном анализе конфликтов и вопросы достоверности анализа на основе выбранной группы переменных. Были представлены классы переменных сравнительного анализа конфликтов и сформированная на их основе модель сравнительного анализа конфликтов.

Во второй главе - **“Особенности конфликтов на Южном Кавказе согласно критериям, использованным в сравнительном анализе”** - представлены особенности конфликтов в Нагорном Карабахе, Южной Осетии и Абхазии в соответствии с группой переменных, включенных в модель сравнительного анализа. Проанализированы факторы, определяющие возникновение региональных конфликтов, характер, особенности формирования и развития конфликтов, правовые и политические компоненты урегулирования. Были обсуждены вопросы, связанные с переговорным процессом по урегулированию конфликтов, в особенности с деятельностью медиаторов. Были выявлены сходства и различия конфликтов Нагорного Карабаха, Южной Осетии и Абхазии на основе модели сравнительного анализа, предложенной в рамках диссертации.

В третьей главе - **“Влияние демократизации на процессы урегулирования конфликтов. Южный Кавказ”** - представлены процессы внедрения и укрепления демократических ценностей в непризнанных государствах Южного Кавказа и препятствия на пути эффективного функционирования государственных институтов. Были проанализированы результаты процессов демократизации в Нагорном Карабахе, Южной Осетии и Абхазии и возможное влияние на процесс их признания. Представлены возможности формирования многопартийных систем и соответствующие правовые основы. Обсужден вопрос членства непризнанных государств Южного Кавказа в различных интеграционных объединениях, вероятность установления экономических связей и возможность влияния данных факторов на процесс международного признания.

MARGARIT PETROSYAN

THE CONFLICTS OF THE SOUTH CAUCASUS AND THEIR SETTLEMENT  
PROCESS: COMMONALITIES AND PECULIARITIES

Dissertation under IG.00.02 – “Political Institutions and Processes, International Relations” aspiring to earn PhD in Political Science

The public defense will take place on July 28 at 12:00 at the Yerevan State University, at 056 “Political Science” HAC Specialized Chamber session (Address A. Manukyan str. 1, Yerevan 0025, Republic of Armenia)

**Summary**

**The aim of the thesis** is to reveal the commonalities and peculiarities of the conflicts in Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia and their settlement processes, to identify the main factors affecting the conflict settlement process, to disclose the main features of promoting the process of democratization as well as the prospects of cooperation with various integration unions.

Within the research, the comparative analysis of the conflicts of Nagorno-Karabakh, South Ossetia and Abkhazia has been conducted on the basis of a new model of comparative analysis (nine classes of variables). It enabled to identify not only the commonalities and peculiarities of the nature, settlement and negotiation processes of the above mentioned conflicts, but also to consider the opportunities and prospects for conflict settlement within the framework of international law. The thesis also addresses the peculiarities of the democratization process and its possible impact on the process of international recognition.

The thesis consists of introduction, three chapters, conclusion and bibliography.

The first chapter, entitled “**Methods of Conflict Research and Modeling Problems of Comparative Studies**”, presents the most frequently used political science methods in conflict analysis, the main features of their application, as well as their advantages and disadvantages. It discloses the modeling problems of comparative analysis, introduces a general scheme of conflict study strategy, and examines the issues related both to the selection of a set of variables used in comparative analysis of conflicts and to the reliability of the research conducted on the basis of the selected set of variables. The chapter introduces the variable classes of the comparative analysis of conflicts and a new model of comparative analysis of conflicts based on these classes.

The second chapter, entitled “**The Features of the South Caucasian Conflicts according to the Criteria used in Comparative Analysis**” introduces the conflict features of Nagorno-Karabakh, South Ossetia and Abkhazia based on the set

of variables included in the model of comparative analysis. It analyzes the factors determining the origin of the regional conflicts, their nature, the peculiarities of conflict formation and development as well as the legal and political components of the settlement process. The chapter addresses the issues related both to the negotiation process over the conflict settlement and to the mediators' activities. It identifies the similarities and differences between the conflicts of Nagorno-Karabakh, South Ossetia and Abkhazia, and their settlement processes on the basis of a comparative analysis model proposed within the framework of the thesis.

The third chapter, entitled **“The Impact of Democratization on Conflict Settlement Process: The Case of the South Caucasus”** presents the processes of introduction and strengthening of democratic values in non-recognized states of the South Caucasus, as well as the barriers of the effective functioning of state institutions. It analyzes the results of democratization process in Nagorno-Karabakh, South Ossetia and Abkhazia and its possible impact on the process of recognition. The chapter further introduces the possibilities of multi-party system formation in Nagorno-Karabakh, South Ossetia and Abkhazia, and the corresponding legal bases. Finally, it discusses the possibilities of membership of the South Caucasian non-recognized states in various integration unions or the establishment of economic relations as well as their possible impact on the process of international recognition.

A handwritten signature in black ink, appearing to be a stylized name, possibly 'M. Khachatryan', written in a cursive script.